ւորս Յունաց, և երդմամբ հաստատէին սպանանել զնոսա։ Փոխանորդն և դրագիրն փախեան 'ի տուն Նախարարին, թարգմանն Ճարտարապետն և Վերատեսուչն յայլ տեղի, գործաւորք ընդ միաբանաց զողեցան 'ի Ս. Լուսաւորիչ եկեղեցին, անձինք իբրեւ 20, զորս կերակրէր Տեսուչն Հայոց, ժողովուրդք Յունաց փակեցան 'ի տունս իւրեանց։ Եէնիչէրի աղասին արդելաւ 'ի բերդն, քաղաքապետն յօթեւանս իւր։ Եէնիչէրիք՝ որք մնեալ էին 'ի վանս Յունաց՝ խորտակեցին զդրունս սենեկաց և որոնէին զգլխաւորս նոցա. յափշտակեցին զոր միանգամ գտին. ապա դիմեցին բազմութեամբ 'ի Ս. Յարութիւն, և գործեցին անդ՝ ոճիր մեծ, խորտակեցին զկանթեղս և զաշտանակս զմոմեղէնս և զզատկերս Գողգոթային, և կործանեալ ըզվայատակերտս գործաւորաց՝ եդին 'ի հուր և զտախտակս 'ի շրջապատս Գերեզմանին՝ քակեալ լցին անդ. փշրեցին և զմանս 'ի մարմարիոն քարանց Գերեզմանին, և 'ի տեղիս տեղիս արատաւորեցին զշինուածն, եւ սպառնային միանգամայն այրել եւ կործանել և կոտորել զՅոյնս 'ի բերան սրոյ, և այսպէս զէն 'ի ձեռին շրջէին 'ի քաղաքին և ժողովէին 'ի Ս. Յարութիւն, և եղեւ վնաս մեծ Յունաց և սուղ ինչ եւս Հայոց։ Յոյնք որ թաղուցեալ կային այսր և անդր՝ միջնորդ կալան զգլխաւորս այլազգեաց, և նոքա ստիպէին զքաղաքապետն հանել զզօրսն 'ի բերդէն. իսկ նա չէր ձեռնհաս առ այն, զի հրամանաւ Կուսակալին նստեալ էին նոքա անդ։ Ապա միաբանեալ Մըզրըպի զօրաց՝ կանգնեցին զերիս դրօշակս 'ի վերայ բերդին եւ պատրաստեցան 'ի մարտ, զի եղեալ էին 'ի մոի մեռանիլ և ոչ ելանել անտի։ Ապա ժողովեալ ամենեքեան 'ի միասին եդին պայման 'ի միջի՝ գրել առ Կուսակալն և զկնիր 12 աւուրց յանձնել Եէնիչէրեաց զբերդն. զնոյն խոստացան առնել և Յոյնք, և եառուն մուրհակ թէ՝ 'ի մասին յափշտակութեան վնաս ինչ ոչ տեսաք. և յետ այնորիկ ելին 'ի վանօրէից Յունաց և 'ի տաճարէն Ս. Յարութեան, և փակեցաւ դուռն և դադարեցաւ շինութիւնն. բայց երկոքին կողմն կասկածեալ 'ի միմեանց՝ կային 'ի պատրաստի։ Յետ այսր չփոթութեան Ճարտարապետն, դրագիրն և Մեսրոպանոսն Յունաց մեկնեցան 'ի Յոսպէ գը-